«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14-1/02

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 08.12.2017թ. ժամը 17:00

Համաձայն 27.10.2017թ. թիվ 5998/12 գրությամբ՝«Արարատբանկ»ԲԲ ընկերությունից,«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝01.11.2017թ-ին ստացված դիմումի սնանկության գործով կառավարիչ՝ Անդրանիկ Ելինյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով,կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Դեկտեմբերի 08-ին ժամը 17.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի 29.11.2017թ-ին հետաձգված նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
«Արարատբանկ»ԲԲ ընկերությունը
Սնանկության գործերով կառավարիչ՝ Անդրանիկ Ելինյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Սնանկության գործերով կառավարիչ՝ Անդրանիկ Ելինյանը
Դիմումատու՝ «Արարատբանկ»ԲԲ ընկերության լիազորված ներկայացուցիչ Դավիթ Ազիզյանը, նիստին չեր ներկայացել,իսկ հանձնաժողովի նախագահի հեռախոսազանգին պատասխանեց, որ բանկի կողմից նիստին ներկայություն չի ապահովվելու:

ԼՍԵՑԻՆ՝
Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, «Արարատբանկ»ԲԲ ընկերության թիվ 5998/12 գրությունը՝ ստացված սնանկության գործերով կառավարիչ՝ Անդրանիկ Ելինյանի 11 սնանկության վարույթներով գործողությունները սնանկության գործով կառավարիչների կանոնագրքով նախատեսված պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահն հայտնեց հանձնաժողովին նաև որ դիմումին կցված ոչ մի ապացույց չկա և դիմումը նույնպես չի պարունակում,ոչ մի հիշատակում որևե փաստի վերաբերյալ,այլ գրված է ընդհանուր դրույթներով և հիշատակված են 11 վարույթներ առանց անունների կամ համարների:

Հանձնաժողովի նախահն հիշեցրեց անդամներին որ նախորդ նիստի ժամանակ այդ փաստերը ներկայացվել է դիմումատուին և նիստը հետաձգվել է,որոշելով՝

1.Հանձնարարել սնանկության գործերով կառավարիչ՝Անդրանիկ Ելինյանին մեկ շաբաթվա ընթացքում բոլոր գործերով ներկայացնել հակիրճ հաշվետվություններ կատարված գործողությունների մասին:

2.Դիմումատուին հորդորել մինչև նշանակված հանձնաժողովի նիստի օրը ներկայացնել դիմումի լրացում փաստական հանգամանքների և ապացույցների վերաբերյալ:Դրանց չներկայացման դեպքում կարգապահական վարույթը կկարճվի փաստերի բացակայության հիմքով:

3.Սույն որոշումը ներկա կողմերին և հանձնաժողովի անդամների համար համարվում է պատշաճ ծանուցում,հանձնաժողովի նիստի վայրի և ժամի մասին

Հանձնաժողովի նախագահն տեղեկացրեց նաև ներկաներին,որ իր կողմից բանկի ներկայացուցչին զանգահարելու միջոցով տեղեկացվել է,որ սնանկության գործով կառավարիչ՝Անդրանիկ Ելինյանը,անձամբ այցելել է բանկ և բոլոր 11 գործերով ներկայացրել է գրավոր և սպառիչ պատասխաններ վարույթների-ընթացքների վերաբերյալ և իրենք այս պահին կառավարչի աշխատանքների վերաբերյալ ոչ մի դիտողություն կամ բողոք չունեն,բայց գրավոր դիմումի լրացում չեն կատարում,նման ընթացակարգ չունենալու պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը ձայն խնդրեց և մասնավորապես նշեց,որ օրենքով սահմանված սնանկության գործով կառավարչի կողմից պարտատիրոջը հաշվետվություններ տալու կարգ սահմանված չէ,բայց սույն գործերով կառավարիչը ծախսելով ժամանակ և այլ միջոցներ կազմել է հաշվետվություններ և գործընկերային հարաբերություններից ելնելով անձամբ տարել է բանկ ու ներկայացրել է պարտատիրոջ ներկայացուցիչներին:Վերոնշյալ հանգամանքը բանկի համար չի հանդիսանում հարգանքի կամ ինչպես նշեցի գործընկերային հարաբերություններ, մինչև անգամ գրավոր հրաժարվելու ըստ էության անհիմն դիմումից կամ բողոքից և հանձնաժողովի նախագ՝Տ.Հարությունյանի զանգին են պատասխանում միան որ իրենք բավարարված են և նիստին չեն ներկայանալու:Այսինքն եթե նախագահն չզանգեր նրանք մինչև անգամ չեին տեղեկացնելու իրենց նիստին չներկայանալու մասին:Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով և հիմք ընդունելով այն փաստը որ դիմումը իր մեջ չի պարունակում ոչ մի փաստական հանգամանք առաջարկում է կարճել կարգապահական վարույթը:

Հանձնաժողովի նախագահն հարց ուղղեց սնանկության գործերով կառավարիչ՝Անդրանիկ Ելինյանին,թե ինչ ընթացքում է դատարան ներկայացված դիմումների լսումները:

Անդրանիկ Ելինյանը պատասխանեց որ 5 գործերով դատարանները կայացրել են որոշումներ և մերժել են բանկի բողոքները,սնանկության գործերով կառավարիչ՝Անդրանիկ Ելինյանը պատասխանեց նաև,որ ընդհանուր առմամբ ոչ մի գործով բացթողումներ չեն եղել,իր կողմից բոլոր վարույթներով էլ կատարվել են համապատասխան գործողությունները և պարտականությունները,ուղղակի դրանց կատարման ընթացքի վերաբերյալ դիմումատուին տեղեկատվություն չի հաղորդվել,որը իր կողմից շտկվել է բոլոր գործերով հաշվետվությունների ներկայացմամբ, որոնք համապատասխան փաստաթղթերի հետ ներկայացվել դիմումատուին,որը և բավարարել դիմումատուի պահանջները և լրացուցիչ ոչ մի պահանջ կամ կարծիք չի ներկայացվել:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը և Հ.Գևորգյանը նույնպես համաձայնեցին այն կարծիքին,որ դեռ 29.11.2017թ-ին պետք է կարգապահական վարույթը կարճվեր և ընդհանրապես սույն դիմումի հիմքով կարգապահական վարույթ հարուցելու հիմքեր չկային,բայց քանի որ հիմերի բացակայության պատճառաբանությամբ կարգապահական վարույթ չհարուցելը կանոնակարգով բացակայում է,ուստի հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճվի փաստական հանգամանքների և դրանք ապացուցող փաստերի բացակայության հիմքով:

Հանձնաժողովի նախագահն առաջարկը դրեց քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. 27.10.2017թ. թիվ 5998/12 գրությամբ՝«Արարատբանկ»ԲԲ ընկերությունից,«ՍԳԿԿ» ԻԿԿում՝01.11.2017թ-ին ստացված դիմումի սնանկության գործով կառավարիչ՝ Անդրանիկ Ելինյանի գործողությունների /անգործության/, սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել,քանի որ .

ա/Դիմումում առկա չէ,ոչ մի փաստական հանգամանք թե կառավարչի կողմից,որ վարույթով և ինչ հանգամանքներում է դրսևորվել օրենքին կամ կանոնակարգերին անհամապատասխան գործողություն կամ անգործություն:

բ/Կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ և բխել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքից և հիմնավորված են օրենքով իրեն վերապահված լիազորություններով ու կարգապահական վարույթի ընթացքում նրա մեղքը ապացուցող փաստերի /ապացույցների/ բացակայության պատճառաբանությամբ:
2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Աղամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյանը